

Թիւ 26749
Մարտ 17, 1980

Արժանաշնորհ
Տ. Առնակ Էհնյ. Գասպարեան
Հովհաննես Ս. Թովմաս Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Թէնէֆլայ.

Սիրելի Տէր Առնակ,

Ասացած ենք Փետրուար 20, 1980 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 10ին գումարուած համայնքին ծիական ժողովին մէջ կառարուած է ծիական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու զիրով կը վաւերացնենք ծիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ առորեւ արուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծիական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օր հնելով ծիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր զործունէութեան ապրի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքին մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԴՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Վահան Պարսամեան
Սամուել Տէմիրմեան
Զարլը Տուտուրմեան
Ժէր Հաօխնլեան
Լեւոն Նիկողոսեան